


մաթէոսն, և զտ՞ը փիլիպպոսն, և զտ՞ը յովսէփն, և զպիւրք սորա յովանէսն, և ալթուին, որ միամտութ՞ք, բարձեալ զնաչն յե՞ ի յուսս իւրեանց և ծառայքն ս՞ը ուխտիս: ամէն: Եւ գ՞րձլ յիշեցէք անարժան ծրւղ սորա և զծնողսն իմ, և յորժամ կսրգալով և կամ՝ օրինակելով յիշեսջիւք ի մաքրաւիայլ յաղօթս ձեր և զուք յիշեալ լինիջիւք ի ք՞է ս՞յ մերոյ:

609թ Ես Վաղարշապիաթու Եջմիածնէցի Տիրացւ յա-
կորս իմ յօժար կամովս եկի հրաշափառ վանս սրբոյն թօմա-
յի յաղակս կրօնաւորութեան անժ իւր ամենափառող զօրու-
ն խոնարհութիւն և համբերութիւն տացէ ով որ որ այս գիրս
ընթեռնուք կամ արժարծէք ունիք պարտականութիւն լիա-
բերան ասել անժ ի կարգ քահանայութեան արժանի արացէ
իւր քաղցրութեամբն:

Յամի Տ՞ւն 1812 և յամսեանն գկ՞տքրի Ժ՞եկն և այսմ
գողթան գաւառիս իշխողն մերդայ անմատն էր և աթոռոյս
վէքելգարն ջուղայեցի դալլաքեան պօղոս վարդապետն էր
բայց սղալանացս ներել մաղթեմ ընթերցողացդ:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Շարունակութիւն)

V.

Հոգեկան խաղաղութիւն եւ ինքնալրացում.

Հոգեկան տանջանքը տեղի է աւելիս մի ամբոյիչ խաղաղու-
թեան, երբ Յովհ. Թումանեանը թեակոխում է իւր հայրենի եզերքը՝
Ի՞նչ նշանակութիւն ունի նրա համար հայրենի եզերքը կամ,
այլ կերպ ասած, ի՞նչ է հայրենի եզերքը:

Դա մի գերազանցօրէն հաւաքական—հոգեբանական երևոյթ
է: Հոգով, մտքով, զգացմունքներով ու յոյզերով իրարու հետ կա-
պուած մարդիկ զգում են մի անհուն բաւականութիւն իրենց շըր-
ջապատի մէջ: Այդտեղ ամեն ինչ հարազատ է, ընտանի բնու-

թիւնն ևս սիրելի է, որովհետեւ սիրելի են նրա մէջ ապրող մարդկային արարածները: Մարդու ներքինն ամբողջ արտայայտում է իւր բոլոր գրական և բացասական կողմերով այդ օրինակ համակիր միջավայրում: Ոչինչ արգելք չէ հանդիսանում ընդարձակ մտքով ապրելու, ստեղծագործելու և հաճոյք ու վայելչութիւն ստանալու հէնց այդ ստեղծագործութեան մէջ, Մարգուս հասարակական բընադէն այդտեղ է իսկապէս, որ հասնում է իւր զարգացման, փութման ու ինքնատիրապետութեան գազաթնակէտին: Կացութեամբ և մտածութեամբ, նիւթական և հոգեկան շանքով միմեանց հետ զուգորդուած, «մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար» սկզբունքն առաջնորդ ընտրած, բնականօրէն մարդկանց փոխադարձ լրացումը, հոգեկան աշխարհի փոխադարձ ընդլայնումն այդտեղ է, որ կատարելատիպ երևոյթ է ներկայացնում:

Մարդկանց կողք կողքի ապրելը դեռ հանդէս չի բերում հայրենի եզերքի երևոյթը: Կողք կողքի ապրելը դեռ բաւական չէ: Կողք կողքի կարող են ապրել երկու և աւելի հայրենի եզերքների ներկայացուցիչներ: Կուլտուրական, հոգեկան և նիւթական կապեր են հարկաւոր: Ու եթէ այդ կապերը գոյութիւն չունին, գոյութիւն չի ունենայ և կողք կողքի ապրողների հայրենի եզերքի նոյնութիւնը: Կողք կողքի ապրողները կարող են երկու տարրեր աստղերի բնակիչներ լինել, եթէ միայն աստղերի վրայ մարդիկ ապրելու հնարաւորութիւն ունենային:

Միևնոյն ազգային ամբողջութեան պատկանելն ևս դեռ միևնոյն հայրենի եզերքին պատկանել չի նշանակում, որովհետեւ ազգութեան մէջ գոյութիւն ունին տարբեր հաւաքական—հոգեբանական միութիւններ, ուրեմն և տարբեր հայրենի եզերքներ: Յովհ. Թումանեանը կարող է մեզ օրինակ ծառայել. Նա ունի իւր հայրենի եզերքը, որ իւր հիմնական արժէքներով տարբեր մի երևոյթ է ներկայացնում, քան մեղչանական միջավայրը: Նրան չի գրաւում, վերջինս ի որթ ու օտար է իւր հոգու համար, որովհետեւ համակիր, հարազատ, կացութեամբ և մտածութեամբ համերաշխ տարրեր չունի: Նա չի սիրում այդ վայրը, դգում է հոգեկան տանջանք խորթ չըջապատում, իւր «եսը» սահմանափակուած է գտնում, ի վերջոյ ինքնալրացման ամեն մի հնարաւորութիւն վերացած է համարում:

Բոլորովին այլ երևոյթ տեղի ունի իւր հայրենի եզերքին:

Բանաստեղծը սիրով է տոգորուած, սիրում է և սիրում: Նրա հոգին խաղաղ է, որովհետեւ սիրոյ միջոցով ընկզրկում է իւր սեպհական խմբակցութիւնը, հաղորդակից է գտնում վերջինիս անհունութեանն ու յաւերթութեանը: Սկզբը նրա սահմանափակուած «եսը» ընդլայնում է, դարձնում մի մեծ ամբողջի զգայուն

մասնիկը, հանրական ստեղծագործութեան դորձոն տարրերից մէկը: Սէրը որպէս ամօքիչ սպեղանի, բուժում է նրա ցաւած հոգին, վերացնում նրա մենակութեան երեւոյթը, ոյժ տալով բանաստեղծի հասարակական բնազդին ինքնալրացման միջոցով:

Ու հնչում է սիրոյ ներբողը՝ կաթողին, քնքշախօս ու վարակիչ է դառնում բանաստեղծի աստուածային բարբառը: Բանաստեղծը վերապրում է իւր յոյգերը և մեզ վարակում նրանցով, մեզ ևս հաղորդակից դարձնում իւր զգացածներին: Մենակութեան երգերի «ախն» ու «օխը», յոռեանսութիւնը տեղի է տալիս մի կենսութեան լաւատեսութեան: Բանաստեղծն ապրում և ապրեցնում, յուզւում է և յուզել տալիս: Զի կարելի տեսի, որ նա տըխրութիւն ամենին չի երգում, ոչ, երգում է, բայց այդ ախրութիւնը, հայրենի եղերքի վիշտը՝ լինելով ընդհանրական, ամօքիչ ոյժ ունի, չի հրաժարուցնում, չի զրդռում, այլ թովում է, յուսադրում, փայփայում ու սիրաշահում: Հայրենի եղերքին բանաստեղծի պսիխիկան ստանում է բէալիստական բնոյթ. նրա մէջ ներդաշնակօրէն միանում են տուեալն ու իդէալը, իրականն ու ցանկալին առանց ներքին տարածայնութիւնների: Հոգու ամբողջականութիւն — ահա թէ ինչ է բերում հայրենի եղերքը: Որքան մենութեան երգերում բացակայում էր այդ ամբողջականութիւնը և չեչտում հոգու տանջանքը, այնքան այստեղ թովում է բանաստեղծի վերականգնութիւնը, հոգու խաղաղութիւնն ու ներքին հարմօնեան: Նրա երգերը սիրով են թաթաղուն, որովհետեւ նա գտել է ինքնալրացման ճանապարհը անմահութեան միջոցով:

Մենք տեսանք արդէն, որ բանաստեղծի հոգեկան տանջանքը պայմանաւորուած էր մասամբ և նրանով, որ սէրը գոյութիւն չուներ նրա համար, չէր թեթեալացնում կեանքի դժուարին բնութիւնը: Մինչդեռ իւր հայրենի եղերքին «կեանքը թեթեալ է թւում, ինչպէս անուրջ», որովհետեւ նա հաղորդակից է սիրոյն, երջանկութեան ծայրագոյն զագաթին է գտնւում, «թռչում է բախտից հարբած»՝ երկիրը կապւում է երկնքի հետ սիրոյ միջոցով. ինչ որ ասօրէական է, մանր է ու նեղ, տեղի է տալիս մշտնջենականի, յաւէրժի ու անհունի առաջ: Սէրը բերում է բանաստեղծին «երկնքից ծագած պայծառ ճաճանչը», որովհետեւ նա մարմնացնում է իւր մէջ աստուածային յատկութիւններ. սիրելին միեւնոյն ժամանակ և զիցուհի է: Պէտք է նկատել նոյնպէս, որ մարմնականի և հոգեկանի հակադրութիւնը սիրոյ մէջ, որ այնպէս շեշտուած էր տանջանքի յոյգերում, բացակայում է հայրենի եղերքին. սիրոյ երկիրքն ու սիրոյ երկիրը հաշտ են իրարու հետ: Մարմինը, սակայն, ինչ որ թովչանք ունի, որ առօրէականութիւնից դուրս է բերում բանաստեղծի հոգին: Նա նկարում է այդ թովչանքը վարպետօրէն՝ կնոջ

մարմնական հրապոյրները բնութեան անհունութեան հետ զուգորդելով: Անոջ մերձ լինելը բնաւ նրա մարմնականի չեղար չի ցուցադրում. ընդհակառակ, որքան նա մօտիկ է, այնքան եւ հեռու է թւում: Այդտեղ է ահա, որ սկսում է սիրոյ երազայնութիւնը, որ բոլոր լաւագոյն իրիքների անմեղ թեման է: Նա կայ, բայց և չկայ. կայ, որպէս մահկանացու, որպէս կին, չ'կայ, որպէս անմատչելին, յաւերժի և անհունի մասնակիր:

Այլ եւ բանաստեղծի հոգին մենակ չէ. նա ժխտում է մենութեան սոսկ գոյութիւնն անգամ: Հայրենի եզերքին նրա սիրտը լցուած է, նա ընդգրկում է իւրայիններին, համակիրներին չնչի տակ ծաղկում է նրա հոգու վերակենդանութիւնն ու զարթնումը: Բնութեան մի գեղեցիկ պատկերով բանաստեղծը նկարում է իւր հոգեկան ներքինը. երկու սե ամպ քշւում են հոգմի առաջ, սահայն հոգմը իւր չար հոսանքով չի կարողանում բաժանել նրանց, որքան էլ լայն երկնքով նրանց դէս ու դէն է քշւում, տանում:

Եւ անդադար գնում էին

Քշւած հոգմի կատաղութեամբ,

Իրար կպած ու միասին

Երկու սե ամպ, երկու սե ամպ...

Որքան խոհերի զոհեր է բաց անում այդ քառակիւր Գեղարուեստականութեան ոյժն էլ հէնց դրա մէջ է, խոհերի այդ անվերջանալիութեան մէջ: Բազմաթիւ, անթիւ, անքանակ ապրումներ խտացնել մի արտայայտութեան մէջ, բայց այնպէս, որ այդ արտայայտութիւնը դառնայ բանալի ուրիշ շատ ու շատ ապրումներ բաց անելու համար: Մենութեան երգերի մէջ մեր բանաստեղծը միանգամայն զուրկ էր գեղարուեստականութեան այն հմայքին տիրապետելու ոյժից. նրա ապրումները գերազանցօրէն առօրէական էին, նրանք չէին տանում մեզ գէպի անհունն ու յաւերժը, ինչպէս հայրենի եզերքի նւագները: Մենք անվերջօրէն կարող ենք մտածել այդ «երկու սե ամպի» տակ գնելով անհամար զանազանատեսակ ապրումներ, միաժամանակ լայնացնելով միտքն ու խորացնելով զգացմունքը: Ահա թէ ինչու ենք մենք ասում, որ միայն հայրենի եզերքին է արտափայլում Յովհ. Թումանեանի տաղանդը և նա մենակ մարդու երգիչը չէ և չի կարող լինել:

Անմահութիւնը նա գտնում է հայրենի եզերքին: Հոգեկան Տանջանքի բնագաւառում նա իւր «Ետով» սահմանափակ մի մահկանացու էր, բայց այստեղ զգում է, որ ինքը պիտի յաւերժանայ: Փոյթ չէ, որ ամեն ինչ անցողիկ է. այդ անցողիկութիւնը նրան այստեղ ցաւ ու վիշտ չի պատճառում:

Անց են կենում սէր ու խնդում,

Գեղեցկութիւն, գանձ ու դահ,

Մահը մերն է, մենք մահինը,

Մարդու գործն է միշտ անմահ:

Հայրենի եղերքի այս կենսախինդ լաւատեսութեամբ է համակուած մեր բանաստեղծի կենսահայեցողութիւնը, նրա բոլոր արժէքաւոր երկերը, որոնց մէջ «Թմրկաբերդի առումը» առանձնապէս ուշադրաւ է մեզ այստեղ հետաքրքրող սիրոյ պրօքլեմի տեսակէտից:

Մենութեան երգերում բանաստեղծը շատ յոռատեա է գէպի սէրը: Ի՞նչ բան է որ սէրը: Արիւնի մի վրդովմունք է, անցողիկ փծուն արժէքների համազումար: Չպէտք է հաւատալ ոչնչի, ամեն ինչ կեղծիք է. ե՛կ կնոջ երգումը, ե՛ նրա համայրները:

Հայրենի եղերքին բանաստեղծը դնում է սիրոյ մէջ ինչ որ մի անմեռ բան: Սէրը չի կարող դաւաճանել, նա կարող է մոլորուել, սոյթաքել, բայց վերջ ի վերջոյ յաղթանակը նրան է պատկանում:

Սիրոյ հէնց այդ յաղթանակն է, որ հնարաւոր է դարձնում անմահութիւնը:

Թմրկաբերդի տիրուհին մարդուն անմահացնող սիրոյ այդ յաղթանակի մարմնացումն է.

Ին տեսակ կին,

Ես իմ հոգին,

Թէ աշուղն էլ ունենար,

Առանց զէնքի,

Առանց զօրքի

Շահերի գէմ կը գնար:

Սիրոյ հնոց,

Կրակ ու բոց

Էնպէս աչքեր թէ ժպտան

Մարդու համար

Օրուայ պէս վառ

Գիշերները լոյս կըտան:

Վարդի թերթեր

Էնպէս չուրթեր

Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,

Էլ քեզ ոչ չահ,

Ոչ ահ ու մահ,

Ոչ զէնք ու զօրք կը յաղթեն:

Սէրը կեանքի սարսափն ու մահը վանող միակ գործօնն է: Սիրով զեղուն սիրտը ոչ ահից է վախում, ոչ մահից: Այս եղանակը, ինչպէս ասացինք վերեւ, խորթ է Յով. Թումանեանի մենութեան երգերին: Սէրն այստեղ ստեղծագործական ազդակ է, ոգևորում է, շունչ ու կեանք է տալիս, վանում է թուլամորթութիւնն ու «ախ» ու «սխը», որ այնպէս անախորժ կերպով հնչում էր բանաստեղծի տանջանքի և «եւի» սահմանափակութեան բնադաւառում:

Թմրկաբերդի տէրը-իշխան Թաթուլը յաղթութեան հրաշքներ է գործում ներշնչուած սիրով: Բանաստեղծը երգում է այդ սէրը, որպէս ստեղծագործութեան, հնարաղիտութեան, գիւտի ազդակ:

Նա է շունչ, հողին իշխան թաթուլի,
 Նրա սիրովն է հարբած էն հսկան,
 Նրա ժպիտն է քաջին ոյժ տալի,
 Որ դաշտն է իջնում առիւծի նման:

Բանաստեղծն այդ սիրոյ առաջ սայլածքման մի հնարաւորութիւն է գնում: Թմրկաբերդի տիրուհին զուցէ մի աւելի բարձր սիրոյ կարօտով անձնատուր է լինում Շահին, հրապուրուած վերջնիս կողմից ուղարկուած աշուղի թովիչ ներբողներին: Սէրը, Թըմրկայ տիրուհու ոյժ ներշնչող սիրտը՝ մոլորում է: Մենութեան երգերում բանաստեղծը—երկու կարծիք չի կարող լինել այդտեղ,— մի յարմար առիթ կղարձակը այդ սայլածքումն ու մոլորութիւնը ոյժ տալու համար իւր տանջանքի յոգեկրին, «եսի սահմանափակման» նուագներին: Բայց հայրենի եղերքին նա այլ տրամադրութեամբ է համակուած: Թմրկաբերդի տիրուհին իւր թաթուլին կորցնելուց յետոյ աւելի ուժգին է սկսում նրան սիրել, չվախենալով անդամ մահից, Շահի դահիճներից: Սէրը ուժեղ է, քան մահն ու մահուան երկիւղը,—մեծ վիպասանի այս դարձուածքը լիութի իրագործում է այստեղ:

Շահին սիրելով՝ Թմրկայ տիրուհին նրան հնարաւորութիւն է տալիս տիրանալ թաթուլի բերդին: Շահը տիրանում է, բայց միաժամանակ քնկնում Թմրկայ տիրուհու աչքում. վերջինս օհն թէ ինչ պատասխան է տալիս Շահին՝ անմահացնելով իւր սէրը դահճի ձեռքով մեռնելուց առաջ: Իւր սպանուած ամուսնուն է գովում Շահի հանգէպ:

Քաջ էր ու սիրուն քեղեկից առաւել.

Մի բարձր ու ազնիւ տղամարդ էր նա.

Կնոջ մատնութեամբ ամբողջ չի առել.

Ձի կռել կեանքում երբէք խաբեւայ...

Սէրը յաղթանակում է այդպիսով, միևնույն ժամանակ բանաստեղծի սիրար լցնելով անմահանալու աննշանքով, լաւատեսութեան ապրումներով:

Սիրոյ համար անձնագոհութիւնը գեղեցիկ կերպով երգուած է նաև «Ախթամարի» մէջ:

«Թմրկաբերդի առումը», պօէմայի մէջ սէրը, ինչպէս տեսանք ենթարկուեց ծանր փորձութեան, բայց և այնպէս յաղթանակով ելաւ: Նման փորձութիւն ևս յարուցւում է սիրոյ առաջ «Ախթամարի» մէջ: Այստեղ ևս բանաստեղծի հայրենի եղերքի խանդավառութիւնը՝ իւր հերոսներին հագեկան ամբողջականութիւնը չի խանգարում ու աղճատում ոչնչով: Սէրը չի աղարուում, ու նա մնում է բարձր, վեհ, շննկով երբէք հոգու ընկճումն, հիասթափութիւն:

Այդ բոլորը յատուկ է նրա մենութեան երգերին, այստեղ կայ մի ուրոյն տեսակի լաւատեսութիւն, որ ժպտում է, կենսախինդ է և լայնհոգի:

«Ախթամարը» գաղտնի սիրոյ մասին ժողովրդի աշխարհայեցողութեան մի յաջող ցուցադրումն է, միևնոյն ժամանակ դա սիրոյ անձնանուիրութեան ներքող է, հոգիների ամբողջականութեան դրուատում:

Տղան սիրում է աղջկան «գաղտագողի» Աէրը երկու կողմից ևս հօր է, բունն Գիշերները թամարը կրակ է վառում կղզու վրայ, որպէս փառոս, տղային յետ պահելու համար ճամբան մոլորելուց: Տղան առանց նաւակ ծովն է մտնում և առնացի բազուկներով ջուրը ճողփում, գէպի դիմացի կղզին լող տալիս:

Եւ թամարը սրտատրոփ

Արդէն լսում է մօտիկ

Ջրի ճողփիւն, ու ողջ մարմնով

Սիրուց այբում է սաստիկ:

Սիրած սիրածին գտնում են կղզու վրայ: Ու սկսում է սիրոյ հեշտ վայելքը: Ոչ որ չկայ հանդիսատես, սէրը գաղտնի է մնում: Բայց այդպէս չէ: Նահապետական բարոյահեցողութիւնը չի ընդունում գաղտնի սիրոյ գոյութիւնը: Բնութիւնն անգամ, այդ հայեցողութեամբ, հակառակ է գաղտնի սիրոյն: Չնայած որ ոչ մի մարդ արարած ականատես չէ երկու սիրահարների հեշտագին գիշերուն, բայց կան վանայ ծովի ալիքները, կան երկնքի աստղերը, որոնք հանդիսատես են և որոնց բերանով պիտի անիծի գաղտնի սէրը նահապետական գիւղացին՝ սիրահարներին համարելով-մանաւանդ աղջկան—«լիրը, անամօթ», բամբասանքի արժանի:

Միայն ալիքը վանայ ծովի

Մեզմ գիպչում են ասիւրքին,

Հրհրելով հեռանում են

Շշուռջներով անմեկին:

Նրանք ասես փսփսում են . . .

Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբասում են

Լիրը, անամօթ թամարից . . .

Բնութեան «բամբասանքը», սակայն, ոչինչ արդեւ չի հանդիսանում սիրահար զոյգի համար վայելելու բնութիւնից օրհնուած սիրոյ հեշտանքները:

Սիրահարները բախտից հարբած, ասլրում են բնութեան մէջ, երջանիկ են: Ամեն օր կրկնում է նոյնը.

Մինն ալէկոծ ծովն է մտնում,

Միւսն ազօթում եղերքին . . .

Բայց նահապետական գիւղացին, որ բնութեան բերանում «բամբասնք» է զրել, ելնում է խօսքից գործի անցնելու, և հանգ-
ցնում է սիրոյ կրակը: Նահապետական գիւղացու «պահպանողա-
կան» աշխարհայեացքը սիրոյ խնդրում Յովհ. Թումանեանը մեղմել
է, սիրոյ կրակի մարումը վերագրելով միայն «չարկամ մարդկանց»,
այսինքն սահմանափակել է զազտնի սիրոյ հակառակորդների թիւը:
Ի զուր: Մեր ժողովրդական երգերի մէջ ցայտուն կերպով է ար-
տայայտուած դադտնի սիրահարների տանջանքները տիրող սովո-
րոյթի կողմից . . .

Բայց մի անգամ չարկամ մարդիկ

Նրանց դադտնիքն իմացան,

Լոյսը հանգցրին սև ու սառտիկ

Մի մութ գիշեր գիւական:

Տղան մոլորում է խաւար ծովում, փարոս—կրակը հանգած է:
Բայց նա շարունակում է որոնել սիրածին և մեռնում է նրա ա-
նունը չրթունքին.

Նրա շուրթին, պաղ, կարկամած,

Ասես, մեռած ժամանակ

Սասկէ էին երկու բռն.

Ա՛խ, Թամար . . . »

Թմկաբերդի հերոսուհին ևս, ինչպէս տեսանք, մեռնելուց
առաջ հաւատարիմ մնաց իւր սիրոյն: Այստեղ ևս, «Ախթամարի»
մէջ հոգու ամբողջականութիւնը, սիրելու հետևողականութիւնը
տեղի չեն տալիս—վանայ ծովի ալիքների մէջ յաւերժօրէն հնչում
է սիրահար տղայի մրմունջը՝ «Ա՛խ, Թամար» . . .

Ներքին տարածայնութիւններով ու աններգաչնակութեամբ
տառապող բանաստեղծի հոգին, որ տանջւում էր այնպէս, շատ
բնական է, որ այս ամբողջական հոգիները կերտելով՝ պիտի խա-
ղաղութիւն մտցնի իւր ներքին աշխարհում, իւր բղքտուած
հոգին ձուլելով նրանց մէջ ինքնալրացումով: Ժողովրդական ստեղ-
ծագործութիւնը լայնօրէն ընդգրկելով, դառնալով նրա մի մաս-
նիկը և գիւտի շտեմարանը հարստացնողը, բանաստեղծը մոռանում է
իւր «անհատական հարցերը», մեշհանական միջավայրը և գերա-
զանցօրէն երգում իւր հայրենի եղերքը:

Այդ առումով Յովհ. Թումանեանի գլուխ գործոցն է «Անուշը»:

Խոնչ իմաստով ենք գլուխ գործոց համարում այդ հրաշալի
քերթուածքը:—Մենք գիտենք արդէն, որ իւրաքանչիւր տաղանդ

ունի իւր զեղեցիկը: Բանաստեղծի այն երկը, որ իւր մէջ ցոլա-
ցնում է զեղեցիկը, ստեղծագործողի ձիրքին յատուկ կենսական հար-
մօնիան ցայտուն կերպով — մենք անուանում ենք զլուսն գործոց:
Յովն. Թումանեանը չէր կարող զլուսն գործոցներ յօրինել մենու-
թեան ապրումների սահմանում, որովհետեւ դա նրա զեղեցիկի բնա-
կան միջոցն էր ներկայացնում:

Նրա զեղեցիկը հայրենի եզերքն է, որ դրուատուած է «Ա-
նուշի» մէջ: Սակայն այդ հայրենի եզերքը մատնուած է առաջա-
դէմ ժամանակի աւերիչ հոսանքին և նրա արմէքները հետզհետեւ
անցնում են պատմութեան գիրկը:

Գնւաւ եկէք կրկին շիրմից իռաւարից,

Գնւաւ եկէք անտեմ, չօչափեմ, լսեմ.

Կեանքով չնշեցէք, ապրեցէք նորից,

Լցրէք պօկտի հաճոյքը վսեմ . . .

Բանաստեղծը կանչում է իւր հին ծանօթներին, այն սիրելի
ղէմերին, որ այժմ չկան, բայց որոնց կարօտը կտրել է քունը
իւր աչքից, Յիշում է իւր հայրենի օջախը, որ թողել է ու պան-
դխտել՝ բնկնելով նոր և անհարազատ միջավայրի մէջ, որտեղ ինքն
իրեն զգում է սրբուկի վիճակում:

Կար մի ժամանակ, երբ բանաստեղծն երջանիկ էր, ապրում
էր հայրենի եզերքին կից՝ ինքն ևս ֆիզիքապէս նրա մի մասնիկը
լինելով: Յովն. Թումանեանն իւր «ինքնակենսագրութեան» մէջ
օգնորումը նկարագրել է իւր մանկութեան բախտաւոր օրերը: Նա
մանկութիւնը գիւղում ու սարերում է անցկացրել: Մանկական
ուսումն եղել է «գաւազանաւ երկաթեաւ», բայց և այնպէս ան-
մոռաց յիշողութիւններ է թողել բանաստեղծի սրտի մէջ: «Իրի-
կունները, երբ տուն էինք հաւաքուում, հայրըս (քահանայ) թինկը
տուած ամուսն էր իւր չօնգուրը ու երգում Քեօթօղլին, Քեարամը,
կամ որեւէ հոգեօր երգ: Լօռու քաջերի մասին էլ պատմութիւն-
ներ է լսել նա իւր հայրենի օջախում, ինչպէս խոստովանում է
«Անուշի» մէջ.

. . . Ու ձմրան երկար գիշերը նստած

Խօսում են Լօռու հին հին քաջերից:

Սակայն այդ քաջերի «հերոսական գործերից» միայն մէկն է
գրաւում ներքին հոգեկան տանջանքով համակուած բանաստեղծի
հոգուն. — ինչպէս էին սիրում հին հին ծանօթները, սիրելի զէմ-
քերը, որ հիմա չկան, մեղչանական միջավայրի մէջ ամենին գո-
յութիւն չունին: Եւ իսկապէս հայրենի եզերքում առաւելապէս,
եթէ չասենք բացառապէս սէրն է կազմում այն առանցքը, որի
շուրջը պտտում է Յովն. Թումանեանի նահապետական կենսահա-

յնցողութիւնը Դժուար չէ այդ բանի գաղանկը գտնել. համայնօրէն անմահանալու միակ լայնարձակ ուղին սէրն է տալիս: Սիրելի եւ լուծուել սիրոյ կրակի մէջ—անձ անմահութեան բանաձեւը: Իսկ մեր բանաստեղծը անմահանալու, իւր «եսը» ընդարձակելու եւ ինքնալրացման կիզիչ պահանջ է զգուս, որ նա իրագործում է, մարմնացում իւր հայրենի եղերքին:

Տեսանք, որ «Ախթամարի» մէջ բնութիւնը սիրոյ խնդրում հաշտ է մարդու հետ. Վանայ ծովի ալիքները մինչև օրս էլ կրկնում են սիրախորոյս պատանու կսկիծը՝ ան թամար. թէպէտ եւ նահապետական գիւղացին կարծում է, թէ կրկնքի աստղերն անգամ փափալով բամբասում են «անամօթ» թամարից:

Այդ երկու գիծն ես ցայտուն կերպով է արտայայտւած «Անուշի» մէջ:

Բնութեան ոգիները, որոնցով սար ու ձոր լցնում է նահապետական գիւղացին, ողբում են Անուշի կորցրած սէրը.

Եկէք, քոյրեր, սէգ սարերի

Չքնազագեղ ոգիներ,

Եկէք, ջահիլ սիրահարի

Սէրը ողբանք վազամեռ . . .

Ու նրանց հետ ցօղ արցունքով

Լցում քրտերն ու աչիք՝

Սարի ծաղկունք տխուր սուգով

Հասցնելին էն գիշեր:

Սիրած ու սիրոյն զոհ գնացած երիտասարդի—լեռնցի Սարոյի գին հողին յանձնելուց յետոյ.

Ծառ ու ծաղիկ սօսափելով

Բոյր խնկեցին դուրեկան,

Ծեր Դե-բեղն էլ ահող ձայնով

Երգեց վսեմ շարական:

Սակայն նահապետական գիւղացին ստեղծել է մի ուրոյն կեանք՝ յար եւ նման իւր աշխատանքի, տնտեսական հիմնաչէնքի բնաւորութեանը: Այդ հիմնաչէնքը պայմանաւորում է որոշ բարոյական օրէնքներ, սովորութիւններ, սահմանափակ, նեղ եւ պրիմիտիւ այն չափով. ինչ չափով այդպէս է տուեալ հասարակարգը: «Ազաթ կայ սակայն էն մութ ձորերում, ու միշտ հնազանդ հնոց աղաթին» են ապրում նահապետական աշխարհում:

Եւ ահա այդ «աղաթը» գնում է իւր արդելիքները բնութիւնից օրհնուած սիրոյ հանդէպ: Ի՞նչ կասեն մարդիկ—ահա «աղաթի», որ նոյն է քարացած փորձի, բանաձեւը:

«Ախ թամարի» մէջ զիւղացիին «անամօթ» անուանեց սիրահար թամարին: Այդպէս է վարւում նա և՛ Անուշի հետ. «ամօթ է, ամօթ» ասում է նրան մայրը, երբ սիրազեղ սիրտը կամենում է ազատօրէն արտայայտուել՝ բանի տեղ չգնելով արհեստական կաշկանդումները, քարայած կարդ ու սարքը.

Հերիք է, Անուշ, ներս արի դագէն,
Քանի դուրս թռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի, ինչ աղջիկ է սա,
Հազար մարդի մօտ կերթայ, կը խօսայ:

Անուշը սիրում է խելայեղօրէն և նա պատժւում է, որովհետև հակառակ է գնացել «աղաթին», իւր հօրն ու մօր և եղբօր կամքին.

Տեսար, որ նրան ատում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, նրան հէրն ու մէրդ,
Դու քանի՞ զլուխ ունես քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նրա հետ:

Սակայն սէրը չի ճանաչում «աղաթ»։ Նրա մէջ կայ մի ինչ որ աւելի ուժեղ, բնական բան, քան այդ «աղաթը»։ Երբ սիրահար Սարօն կոխի է բռնում իւր ընկերոջ հետ, նա մի առժամանակ «աղաթի» ստրուկն է դառնում, չի ուզում վեր ձգել խաղակցին: Սակայն հէնց որ հայեացքն ընկնում է իւր սիրածին, նա մոռանում է ամեն պայմանականութիւն, և «աղաթ», և այն հանգամանքը, որ իւր դէմ կանգնածը Անուշի եղբայրն է ու գետնովն է տալիս վերջնիս: Սիրոյ անուշով ամեն բան ներկի է, սէրը տանջաններ, նրբացուցիչ հանդամանքներ չի ճանաչում, նա ազատ է բնութեան պէս, խօսում ու երգում է թռչնի նման և բռնանում բնութեան օրէնքի պէս, որ անհրաժեշտութիւն և միաժամանակ ազատութիւն է

«Աղաթ» չճանաչող այդ նոյն Սարօն գիշեր ու ցերեկ չուերն ընկած երգում է իւր սէրը.

Աչուղ ես չինել, չեմ հանգստանում.

Խաղեր կապելով,

Չուեր շափելով . . .

Բայց միևնոյն ժամանակ այդ աչուղը ընդունակ է սիրոյ անուշով բռնութիւն գործելու.

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չտան,

Արին կթափեմ ես դեռի նման . . .

Սակայն «աղաթը», ինչպէս որ «Ախթամարի» մէջ, սպանում է սիրոյ կրակը: Բայց բանաստեղծն անմահացնում է սիրահարներին,

որոնք մինչև մահու գերեզման հաւատարիմ են մնում իրենց ուխտին: Կայ մի գեղեցիկ ժողովրդական աւանդութիւն, յօրինուած Համբարձման գիշերուայ համար: Այդ գիւթիչ գիշերը մի հրաշալի-երջանիկ վայրկեան ունի: Երկնքի ոսկէ դռները բացւում են, իսկ երկրում ամեն ինչ պապանձւում լոռւմ է:

Այն վեհ վայրկենին չքնաղ գիշերի,
Երկնքի անհուն, հեռու խորքերից,
Անմուրաղ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս՝ կարօտով մի հեղ համբուրւում
Աշխարհից հեռու, լազուր կամարում:

Այդ «աշխարհը», սակայն, սիրոյ մասին տարբեր հայեացք ունի: Անուշը իւր եարին կորցնելուց յետոյ լսում է մի խորհուրդ, որի հետ ի վերջոյ չի հաշտւում և անմահանում է բանաստեղծի հոգու մէջ.

Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ եարիդ,
Ինչու ի դուր հանգցնում ես
Ջահել կրակն աչքերիդ:
Նրա անբախտ հողի վրա
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գնա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

«Ախթամարին» և «Անուշին» մի սքանչելի լուսաբանութիւն է կցել Յովհ. Թումանեանը: Դա նրա ժողովրդական մօտիւններից մէկն է— «Փարուանա»:

Սիրոյ այն կրակը, որ հանգցրել էր «աղաթը», դրուատման նիւթ է դարձել և՛ այստեղ:

«Փարուանան» մեր բանաստեղծի «սիրոյ փիլիսոփայութեան» ցայտուն արտայայտութիւնն է: Ի հարկէ, նա ոչ մի հարցում չէ դնում—ինչ է սէրը, և ոչ էլ երկար ու բարակ դատողութիւններ է անում սիրոյ շուրջը: Մի քանի բնորոշ յոյդեր է հանդէս բերում, որոնք սիրոյ աղղեցութեամբ են յօրինուած, և բացատրում է նոյն ինքն սիրոյ յոյզն դրանց միջոցով:

Առաջին յոյզը սիրոյ երազայնութիւնն է: Սիրած էակի կամ սիրոյ ատարկայի անմատչելի լինելը, ուրիշ խօսքով՝ երբ ներքին էներգեան չի մարմնանում իրական կերպով—մնում է սիրային երազ, Դա իդէալի և տուեալի հակադրութիւնն է, մի իդէալի, որ ցանկալի է և մի տուեալի, որ չի բաւականացնում մեր ներքին աշխարհը: Դա սիրոյ միստիցիզմն է, իսկ իւրաքանչիւր միստիցիզմ

ծագում է հէնց նոյն այդ հակադրութիւնից, երազելու կամ «օղա-
յին ամբոյցներ» կառուցանելու համար հարկաւոր է, որ մարդ
դժգոհ լինի իւր տրամադրութեան ապկ Կանուող հանգամանքնե-
րից և սրբազան ծարաւով լցուած դէպի մի հեռաւոր, անմատչելի,
բայց միևնոյն ժամանակ և բաղձալի գրութիւն, որ հոգու համար
պիտի բերի երջանկութիւն, յիշեալ հակադրութիւնը վերացնելով և
հոգուն ներդաշնակութիւն պարգեւելով զեղեցիկ միջոցով, Հոգու
այդ ծարաւը, որքան էլ ցաւեցնող լինի ըստ ինքեան, այնու ամե-
նայնիւ որոշ քաղցրութիւն ունի, որը ճաշակելու համար բանաս-
տեղծներից շատերը ներբողել են՝ «Ես պատրանքը սիրեցի» . . .
Սիրային երազի ծնած հառաչանքն ու նրա պարգեւած առօրէակա-
նութեան ժխտումը մի շատ հետաքրքրական երևոյթ է ներկայա-
ցնում հոգեբանական տեսակէտից: Դա միաժամանակ և՛ կենսա-
կան ոյժերի լարումն է և կենսականութիւնից բարձրանալու, վե-
րանալու փորձ: Հոգու խրաքանչիւր լայնացում հէնց այդ ճանա-
պարհով է կատարուում: Տուեալից ելնելով՝ մենք գնում ենք դէպի
իդէալականը, մէկը պայնաւորուած է միւսով, որքան էլ անշուո-
ղով բաժանուած լինին նրանք: «Փարուանայի» հերոսուհու պատ-
կերի մէջ մենք հաստատուած ենք գտնում սիրոյ երազայնութեան
մասին մեր բոլոր ասածները: Նրա հանդէս գալն ահա թէ՛ ինչ է
առաջ բերում իրեն սիրողների հոգու մէջ:

Հառաչում է սղջ աշխարհքը.

Կտրիճները քարացած

Երազների մէջ են ընկնում՝

Էս աշխարհքից վերացած:

Երկրորդ յոյզը սիրոյ քնարականութիւնն է:

Ի՞նչ ենք հասկանում սիրոյ քնարականութիւնն ասելով:—
Դա հոգու ուրոյն ներդաշնակումն է սիրոյ յոյզի միջոցով, Իսկա-
պէս խրաքանչիւր յոյզ իւր մէջ պարունակում է այդ ներդաշնա-
կութեան տարրը: Յոյզի հանդէս գալը մեր ներքին աշխարհում
առաջ է բերում մի ուղղաձիգ դրութիւն: Այլ հոգեկան յատկու-
թիւններ ու վիճակներ առժամապէս լուծւում են, տեղի են տալիս
յոյզի առաջ, որն արտայայտւում է տիրականօրէն: Մաքի և զգաց-
մունքի ներհակութիւնը վերանում է յոյզի միջոցով, նրանք հաշտ-
ւում են միմեանց հետ՝ զառնալով հոգու ամենագօրեղ աղբակի—
յոյզի հպատակ գործիքների: Յոյզի երեան գալը ներդաշնակում է
մեր հոգին, որովհետեւ վերայնում է մեր ներքին բոլոր տա-
ւաձայնութիւններն ու հակասութիւնները և մենք ասլիւ ենք
սկսում՝ մի շեշտուն ուղիով դէպի առաջ ընթանալով: Եւ այդ է
պատճառը, որ մենք ասում ենք, թէ լիբիքան յոյզերի ընագա-
ւառն է ընդգրկում:

Սէրը յոյզ լինելով՝ նրա մէջ միանում են մարմնականն ու հոգեկանը, մեր ներքին աշխարհի ստորակարգ և բարձր առանձնայատկութիւնները։ Նա միաժամանակ և չափազանց պարզ, և չափազանց խորհրդաւոր մի երեոյթ է։ Պարզ, որովհետև մարդկային սերնդի գոյութեան ու յարատեւութեան պայմանն է, խորհրդաւոր, որովհետև «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ».

Ինչիս են պէտք ոսկին, արծաթ
Եւ կամ աստղը երկնքի,
Ոչ էլ զոհար ևս պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի
Ես նրանից հեւր ևս ուզում,
Անշէջ հուրը սրբազան,
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան . . .

Երրորդ յոյզը սիրազրկութիւնն է։

Բաւական հետաքրքրական մի յոյզ է դա։ Առաջին հայեացքից թւում է անմտածելի այդ յոյզի սոսկ գոյութիւնն անգամ։ Ո՞նց կարելի է զգալ սիրազրկութիւնը։ Զգալ ոչ միայն իրրե հասարակ տրամադրութիւն, այլ և զգալ իրրե յոյզ, հոգու բարձր փութորկում։ Եւ իսկապէս կան մարդիկ, որոնց անծանօթ է այդ յոյզը, որովհետև նրանք չունին այն հոգեկան-բնախօսական կազմուածքը, որ ծնել կարող է այդ օրինակ մի յոյզ։ Հարկաւոր է ունենալ բնաւորութիւն, կամքի ոյժ, նպատակին ձգտելու անսայթաք հետևողականութիւն։ Եթէ մի սիրտ բաց է սիրելու համար, ընդունակ անէանալու սիրոյ առարկայի մէջ, եթէ այդ սրտի տէրը բնաւորութիւն էլ ունի, կամքի ոյժ էլ և ձգտումներով անսայթաք հետևողական է — ահա այդ պայմաններում միայն՝ առաջ է գալիս սիրազրկութեան յոյզը, երբ չկայ սիրոյ առարկան, բայց որը պիտի դայ, որովհետև ամեն ինչ սիրողի մէջ պատրաստ է նրան փաբելու։

— Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ
Հուր կարօտով թռած իմ դէմ,
Լուսանում է . . . ու չկայ։

— Կը գայ, դատիկ իմ թանկագին,
Հեշտ չի բերում հուրն անշէջ.
Շատ շատ անգամ բերող հոգին
Ինքն է այրւում նրա մէջ . . .

— Հայրիկ, հայրիկ, մի՞թէ չը կայ
Էս աշխարհքում անշէջ հուր.

Թառամում է սիրտըս ահա,

Պազ է այս կեանքն ու ախուր . . .

Չորրորդ և վերջին յոյզը, որով գունաւորել է Յովհ. Թումանեանը «Փարուանայի» հերոսունու պատկերը—սիրոյ յուսահատութիւնն է:

Այս յոյզն անմիջապէս կապուած է երրորդի—սիրազրկութեան—հետ:

Լացը հոգեկան յոյզի պարզ արտայայտութեան նշանն է: Մեք բանաստեղծը մի գեղեցիկ ներքնատեսութեամբ լացն է մէջ բերել իրեն սիրոյ յուսահատութեան խորհրդանշան, սիմվոլ: Բայց դա մի սովորական լաց չէ, որ յատուկ է թոյլ արարածներին: Դա անմեռ, խոր լաց է, որ ընտրուած է բանաստեղծի հայրենի եզերքի հերոսներին, որոնք սիրում ու ատում են անվերապահ կերպով մինչև կեանքի վերջ՝ առանց կարողանալու դաւաճանել իրենց ներքին էութեանն ու հակումներին: «Փարուանայի» աղջիկը համոզուած է իւր սիրազրկութեան մէջ:

Յոյսը հատաւ . . . ու լաց եղաւ:

Այնքան արաւ լաց ու կոծ,

Որ լիճ կտրեց արտասուքը,

Ծածկեց քաղաքն ու ամրոյս:

Նկատելու է, ռակայն, որ սիրոյ այդ յուսահատութիւնը բանաստեղծն ամբողջ է իւր պոէմայի վերջում. «Փարուանայի» հերոսունու սէրը նուիրական է դարձնում և անմահ: Նրա սիրահարները մինչև օրս էլ այրւում են վառ սիրով. թիթեռները, որ ճրագ ու կրակի մէջ են ընկնում—Փարուանայ սիրավառ ջահիլներն են:

Ամենուրեք լաւատեսութիւն հայրենի եզերքին! Այդ ներշնչումով են վարակուած Յովհ. Թումանեանի բոլոր լաւագոյն գործերը—Դմկաբերդի առումը, Փարուանա, Անուշ . . .

Այժմ հետաքրքրական է տեսնել, թէ որոնք են այդ լաւատեսութեան հառարակական հիմքերը, որոնց ներըողումով մեր բանաստեղծը լայնացնում է իւր «եսը». խաղաղութիւն մտցնում իւր հոգու մէջ, մի խօսքով՝ անմահանում. . .

(շարունակելի)

Ա. Տէրտէրեան